

ՄԵԾԱԳՈՅՆ ՊՈՍԹՈՒԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻԻՆԻ 1966 ՏԱՐԻՈՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Բարձրեալն Աստուծոյ գթառատ ողորմութեամբ առողջութեամբ եւ հոգեւոր զօրութեամբ բոլորեցինք 1966 տարին եւ հասանք նորի սեմին:

1966 տարին մեր եկեղեցւոյ համար հանդիսացաւ բազմաշխատ եւ արդիւնաւէտ տարի մը, թէեւ ունեցանք բազմաթիւ թանկագին կորուստներ, որոնք Ս. Եկեղեցւոյս համար օգտակար զաւակներ էին:

Ուրախ ենք յայտնելու թէ Ս. Եկեղեցիս յարատեւ կը բարգաւաճի եւ իրաւասու անդամներու թիւը կ'աւելնայ:

Ամփոփելով մեր մէկ տարուան գործունէութիւնը սեղմ գիծերով կը ներկայացնենք ըստ հետեւեալին.-

1.- ԿՐՈՆԱԿԱՆՔ-ԱՐԱՐՈՂԱԿԱՆՔ:

Անխափան տարուան բոլոր կիրակիներուն Ս. Պատարագ ունեցանք: Ամէն Կիրակի բարողեցինք կրօնաշունչ եւ ազգաշունչ ոգիով ու պարզ եւ յստակ ոճով, ամենուն հասկնալի ըլլալու համար: Երեմն բարողեցինք նաեւ անգլերէն լեզուով:

2.- ՄԿՐԺՈՒԹԻՒՆՔ:

Այս տարի կատարեցինք 35 մկրժութիւններ: Հետզհետէ մեր ժողովուրդը անսալով մեր յորդուներուն իրենց զաւակները կը բերեն շատ փոքր եղած ատենք, համաձայն մեր աւանդութիւններուն: Բծախնդիր եղած ենք հայեցի անունին եւ կնքահօր Հայ Եկեղեցւոյ զաւակ լինելուն, համաձայն մեր կանոնաց եւ Առաջնորդի հրահանգին:

3.- ՊՍԱԿԱԴՐՈՒԹԻՒՆՔ:

Օրհնած ենք 14 պսակներ, որոնց 9 հատը օտարի հետ: Բոլորին տուած ենք ներդաշնակ եւ հաշտ ապրելու խրատներ: Կը յորդորենք Հայ ծնողները որ իրենց զաւակները Հայ Եկեղեցի առաջնորդեն են՝ անոր կազմակերպութիւններուն պատկանին, որպէս զի հայու հետ ծանօթանան եւ ամուսնանան:

4.- ՎԱՀԱԳՐՈՒԹԻՒՆՔ.-

Կատարած ենք 66 թաղումներ: Այս թիւը բաղդատմամբ ծնողներու կրկնապատիկ է: Իսկ պսակուողներու գրեթէ հնգապատիկ: Այս տարուան ննջեցեալներու միջին տարիքը եղած է 74.5: Այցելած ու միսիթարած ենք բոլոր ննջեցեալներու պարագաները: Խօսած ենք պատշաճ դամբանականներ: Թելադրած ենք որ փոխան ծաղիկի նուիրահաւաքութիւն արտօնեն ի նպաստ Եկեղեցւոյ: Իսկ նու էրներու ցանկները պատրաստած ենք ընտանիքին քով մեր այցելութեան առիթով:

5.- ԴԻւԱՆԱԿԱՆ Աշխատանք:

Գրաս ենեկային եւ դիւանական աշխատանքը շարունակած ենք ըստ առաջնոյն: Առաւօտները եւ գիշերները աշխատանքով հոն անցուցած ենք երբ դուրսը պարտաւորիչ գործեր չենք ունեցած: Առաջնորդարանի հետ պահած ենք կանոնաւոր յարաբերութիւն: Կանոնական որ եւ է հարցի շուրջ գրած ենք Առաջնորդ Սրբազն չօր եւ անոր արտօնութիւնը պապհովել է ետք միայն դրական քայլ առաջ ենք: Մեր դիւանատունը հասած որ եւ է նամակ ունեցած է իր պատասխանը եւ որ եւ է հեռախօսային հարց: իր լուծումը: Միական նորհութի եւ ենթամարմիններու որ եւ է դիւանական գործ որ մեզի յանձնուած է կատարուած է իր օրին: Բոլոր նամակները դասաւորուած եւ իւրայատուկ թղթածրարներու մէջ պահուած են:

6.- ՊԱՏԳԱՄԱԼՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ:

Ապրելի ին վերջը մասնակցեցանք Թեմական Պատգամաւորական ժողովին եւ նոր Առաջնորդի ընտրութեան: Իսկ չոգեւորականաց Համագումարին մէջ ալ կատարեցինք ատենադպրի աշխատոնը: Մասնակցեցանք նաեւ Սեպտեմբերին սկիզբը Հայ Երիտասարդ դաց Կազմակերպութեան Պատգամաւորական ժողովին:

ԺՂՎԵՆԵՐԻ ՃՆՍԺՐ
ԺՂԳԴՅՄՈՒՄ ԱՀ ԱՄԳԴՈՒԿՎԵՐԻ ԽԼՈՒԿԵԱՄԱՆ ՈՎՔՆՈՄՈ ՄՋՐ ԽՍԼԳՋՄԱՆՑՈՒՆ ՄՋՎԿՄԱՆ ՄՈՒՄՈՒ
- ԳՏԳՀ : ԺՂԳԴՈՒԽԻՄ ԱՌՆԳ ԱՐ ՎՄՈՄ ԽՎՈՂՋՄՋ : ՄՈՐԵՎ ԽԱԼՈՄ ԺՄԵՋՈՒ ՄՈԴ ԽՈԴՐԻ ՎՆՄՈ ԴՊ
ՆՄՆՈՎ ԽՄԳԴՈՒԽՆՄՐ ՈՎՈՐՋ ԽՄԳԲՄԵՎ ՈՎԵԽՆ ԽՄ Է ԳԹԵԽՄԵՎՄՍՎ ՄՋՐ ՄՋՎ ՎԵՋՐ ԴՊ ԳԹԵ
- ԳԵԽՄ ԽՄԳԴՈՒԽՆՄԵ ՈՎՄԾՄ ՄԵԳԽՄԵԳՄՊ ։ Մ : ՃՐ Ո ԽՄԳԴՈՒՄԵՐՍ ՈՋ ԳԹՈՎՄԵԽԵԳՄՊ ԽՄ
- ՄՋԻ ՄՍ ԽՈԴՍՈԴԻ ԱՄԳԴՐՎՀՄ ՄՄՍՎ : ԹՋԴԳՋՐ ԽՄՀԴՐՎԾՄ ԽՄ ԽՄԳԴՈՒՎՄԵՐՄԵՋՈՋ ճԳհու
ԴՊ ԱԺՄՈՒԽ ԽՄԳԴՆԳԻԳ ԱՐՑ ԳՄՈՎՀՄ ԽՄ ԽԱԼԳԵԳԵԽԵՐՍ ։ ‘ Ո ԽՄԳԴՐՎԵՐ ԽՄ ԽՄ
- ՄՋՄՈՒՄ ՄՄՎԿԵ ԽՍ ԽՄԼՈՂՅՈՎ ՄՄԳԴՐՎԵՐՄՎ ԴՊ ՄԺՄՎՆ ԽՄՄՄՎ ‘ ԽՄ ԽՄԼՈՂՅՈՎ
ՄՄՎԿԵ ‘ ՆՄ ԽՄՄՄՎՈՎՐԵՎ ԴՊ ՈՎՄԾՄ ՄՋՎ ՄՋՎՆՄԽՄՄՎ ՈՎՄԵՋՈՋ ։ ՆՄ ԽՄ

։ յարստ մը ու վկչրան լգեմ զօտշոտող զտիցրտիզ մ
-ոմ մտրոց զտասմօ ինը զտպրից ցող ։ ոնզ կշտշ ։ Տ ։ Հմգի տգիուղու րին վդումժմտվկմ
-տուց վրինտուրսմզ ։ զտպմտուուկ ։ իմը ոխզդուհիսը ամսդզգմուց նցեսմուժ րգ յանց ճիցուց
-ուոր զտպջրասսմում իուկ ։ զտպ լզմտսը ։ Ռութ զսրաց ։ Տ ։ Քմց րգ զտպզտսկ ։ Ռութ
զիմուկ ։ Տ ։ Քմդ ։ զտպզտսկ ։ ոնզ կշկնզ ։ Տ ։ Հմգի զտպմու սոմզգու ։ ոնզ ժմդ զտպմէ
։ Տ ։ Հմգի զվեցեսմուժ րս զկն զետմտուուկ ։ զկն լգեմ բը զտպթքի զտպս
։ Ազգզտիցրտեցնզիզ մը վկչ - օգ

Հիսլզգտն ւկմ 1 Աժմառո
Դս Եմտի ։ Ետղը շսն Ոչմզգմսն մսլսմ Նսրամստոհ զսչ յգ Ոչվճգնզիգ մզը ։ Ովէ
-վմտիստեհ յգտդ Եզլզիր ։ Ուրկթր Խսոօվլոռն ։ Ելիսմզ իշոց ։ Վճգնզիգ ժղկն ժղվճգն
-մսդշոստ յգ ժղտենզ Ովոռպիր մօ ովսք ։ Մզ Կվթր Խզիր իվոռմնդու Վղոռպիր տսդոռ ։ Ուրզ
րսնմսյ ։ Տ ։ Հմգի Նմսդշոսդ մվտդ Շմսդ Ժսնզ Ուսովի Վմգ Մյզտիս ։
։ Մզ Կվթր Խզիր մօ Հունդմը Նմսդշոսդ ։ Հ

մէն մի անդամը որ եկեղեցի եւ փորձի գալով իր պարտականութիւնը կատարէ:

ի սրտէ կը գնահատենք իւրաքանչիւր անդամին կատարած աստուածահաճոյ գործը եւ երգեհոնահարին ալ կանոնաւ որ օժանդակութիւնը:

իսկ սարկաւագները կը ծառայեն Սուրբ Սեղանին եւ օրինակելի պարտաճանաչութեամբ եկեղեցի կու գան: կը գնահատենք անոնց ծառայութիւնը եւ մեր անկեղծ շնորհակալութիւնները կը յայտնենք բոլորին:

12.- Ենթամարմիններ:

Մեր բոլոր ենթամարմինները աըդէն ձեզի պիտի ներկայացնեն իրենց տարեկան տեղեկագիրները: Միշտ հետաքրքրուած ենք իրենց գործունէութեամբ եւ մեր կարելի միջոցներով ներկայ եղած ենք անոնց ժողովներուն: Ժողովէն առաջ միշտ տեղեակ եղած ենք իրենց օրակարգերուն ատենապետներուն հետ շըման գալով: Մասնաւոր ծրագիր կը պատրաստենք որպէս զի կարելիութիւն ունենալանք կրօնագիտական դասախոսութեանց շարք մը սկսիլ եւ անոնց սորվեցնել չայ եկեղեցւոյ գիտելիքները եւ հաւատալիքները:

13.- Դպրոցներ:

Ունինք երկու տեսակ դպրոց: Հայերէն լեզուի եւ կրօնի: Միշտ քաջալեր եղած ենք խօսքով ու գործով երկութիւն համար ալ: Երբեմն առաջինին այցելութիւն տուած եւ իրազեկ դարձած ենք տարուած աշխատանքներուն: Խնամակալութեան ատենապետ Պ. Տիգ Մուրատճեան հայ լեզուի ուսուցման համար նուիրեալ մըն է իր վարչութեամբ եւ ուսուցչական կազմով:

իսկ Կիրակնօրեայ դպրոցի տեսուչ Պ. Ճան Արոյեան ամէն շաբաթ հեռախօսի վրայ եւ կամ անձամբ այցելութեամբ մեզի տեղեկութիւն տուած է կատարուած ու կատարուելիք գործերու մասին եւ մեր թելադրութիւնները առած է: Ան երբեք մեր հրահանգէն դուրս չէ ելած եւ իր ուսուցչական կազմով ու տուեալ պայմաններու տակ սքանչելի գործ կատարած է:

Տէրը օրէնչ Հայերէնի եւ Կիրակնօրեայ Դպրոցներու անխոնչ մշակները որոնք կը գործեն Մեծասքանչին եւ Աստուծոյ փառքին համար:

14.- Քարտուղարուէ Հի:

Վերջապէս ունեցանք իր գործին տէր, գիտակից, աշխատասէր եւ շնորհալի քարտուղարուէ ի մը որ շաբաթը 20 ժամ կը յատկացնէ մեր գործին: Թէեւ քանի մը ամիսէ ի վեր ան մեզի հետ է, բայց արդէն դարձած է մեզմէ մէկը եւ կանոնաւ որած է իր գրասենեակը եւ հեռախօսային կամ անձնական յարաբերութիւնները կը պահէ ամենայն լրջութեամբ, մամեստութեամբ եւ ազնուութեամբ: Մեր քարտուղարուէ ին կը կոչուի Տիկ. Կրէյս Յակոբեան: Թէեւ հայերէն չի կրնար կարդալ բայց լաւ կը խօսի:

15.- Լուսարար:

Ս. Եկեղեցւոյ լուսարար Պ. Պետրոս Առաքելեան եկեղեցւոյ կառուցումէն ի վեր օրինակելի ճշգապահութեամբ եւ բծախնդրութեամբ հոգ կը տանի մաքրութեան եւ կարգապահութեան: Եկեղեցին իր աշքին լոյսն է, եւ ըստ այնմ կը գուրգուրայ անոր վրայ: Մեր այցելած բոլոր եկեղեցիներուն ամենէն մաքուրն է մերը, որով դուք կը նաքարանալ: Պ. Առաքելեան ամէն օր կը մաքը նաև ծխատան առաջին յարկը, հոգ կը տանի պարտէզին, կը հաւաքէ տերեւները եւ կը մաքը ձիւները: Ասոնցմէ զատ ան կը տպէ մեր եւ ենթամարմիններու բոլոր շրջաբերականները, անդամներուն եւ ՏԱԾԱՐԻՆ հասցէները եւ մեծենային վրայ կը ծալլէ բոլոր շրջաբերականները: իսկ Կիրակի առոտուներն ալ կը մասնակցի արարողութեանց եւ կը ծառայէ Պատարագի ատեն: Մեզի կ'օժանդակէ նաև Եկրուութիւններու եւ թաղումներու ատեն: Կը գնահատենք իր ճշդապահութիւնը, բծախնդրութիւնը, մաքրութիւնը եւ հաւատարմութիւնը ու շնորհակալութիւն կը յայտնենք մեզի ըրած ծառայութեանց համար:

իսկ սրահներու պատասխանատուութիւնը բարեբախտաբար մեր վրայէն վերցուք եւ յանձնուած է հոգաբարձուներէն միոյն: Մեր նոր տնտեսը թէեւ օտարէ, բայց յարգալից է: իրեն հետ ուղղակի գործ չունինք, բայց որպէս չովիւ եւ նախագահ Միոյն որ եւ է ատեն չէ մերժած մեր հրահանգը: Այս ուղղութեամբ գնահատելի է:

Քիչ վերը յիշեցինք թաղումներու սպասարկութիւնը։ Այս առիթով մեր խորին շնորհակալութիւնները կը յայտնենք Տիկին Հէլըն Սուրատճեանի որ հակառակ փոքր երախայ ունենալուն միշտ կու գայ ու կը նուագէ վթաղմանական կարգը աւելի վեհ դարձնելով։

16.- Տաճար։

Այս տարի ՚՚Տաճար՚՚ին ձեւը փոխեցինք եւ էջերը բազմապատկեցինք որ աւելի լաւ ընդունելութիւն գտաւ։ Կը հրատարակենք 1500 օրինակ։ Խմբագրութիւնը կը վարենք մենք։ Հայերէն բաժինը կը մեքենագրենք մենք, իսկ անգլերէն բաժինը՝ մեր քարտուղարուհին։ Տպագրական գործին կը հսկէ Պ. Տիգ Մուրատճեան, որ կը շինէ նաեւ պատկերները։ Գնահատելի է իր տարած աշխատանքը։

17.- Այցելութիւնք։

Մեր այցելութեանց տեսակը եղած է երկու։ Առաջինը հիւանդաց։ Մեզի համար նխանակութիւն չէ ունեցած երբեք վայրին մօտիկութիւնը կամ հեռաւորութիւնը, եւ ժամանակին գիշերը կամ ցերեկը։ Այցելած ենք երբ իմացած ենք։ Իսկ ծխական այցելութիւն տուած ենք այնքան որքան ժամանակ մնացած է միւս գործերէն։ Միշտ շեշտած ենք թէ ծխական այցելութիւն ակնկալողներ թող հեռածայնեն ու ժամադրութիւն առնեն։ Այս պարագան թէ իրենց լաւ է եւ թէ մեզի։

18.- Արտաքոյ Մառայութիւն։

Կանոնաւոր կերպով այցելած ենք ծերանոց։ Տօնական օրերուն հաղորդած ենք բոլորը։ Միշտ քարոզած ենք եւ երբեմն ալ կարճ արարողութիւն կատարած։ Ներկայ եղած ենք քոյր եկեղեցիներու եւ այլ կազմակերպութեանց ճաշկերոյթերուն կամ ժողովներուն եւ խօսած։ Ըրած ենք նաեւ բազմաթիւ դասախոսութիւններ։

19.- Եկեղեցւոյ Կահոյք եւ Սպասներ։

Հետզհետէ կը կահաւորենք մեր եկեղեցին պէտք եղած առարկաներով։ Մեր դասը հարստացաւ առաջնորդական եւ հովուական աթոռներով, որոնց գծագրիչն է ճարտարապետ Ճան Տէնիը լսըն, եւ դպիրներու աթոռներով։ Սեղանները նոր աշտանակներով գարզարուելի ետք ներկայիս սկսան գեղեցկանալ ոսկեպատ Աւետարաններով, սկիհներով եւ միւռոնթափ աղաւնիով։ Իսկ մնացած պակասները կը յուսանք լրացնել ի մօտոյ բոլոր նուևիրատուներուն գոհացում տալով։ Արդէն Ս. էջմիածնի մէջ մեր աւագ սեղանին համար պատրաստուած է հազար տոլար արժողութեամբ խաչ մը, գոր կը յուսանք մօտ ատենէն ստանալ։ Ասիկա նուէրն է հանգուցեալ Օր. Նուարդ Շաղալեանին։

Տէրը օրինէ բոլոր ողջ նուևիրատուները եւ լուսաւորէ հոգիները ննջեցեալ նուևիրատուներու։

20.- Աւետարանի Ցոլքեր։

Այս տարի եւս ՊԱՅԹԱՐԻ մէջ շարունակեցինք մեր կրօնաբարոյական սիւնակը, որ ամէն շաբաթ կը կարդացուի շուրջ տասը հազար ընթերցողներէ։ Գնահատանք ստացած ենք ոչ միայն մեր եկեղեցականներէն եւ ժողովուրդէն, այլ միւս յարանուանութեանց պետերէն եւ ժողովուրդէն։ Որով գոհունակութիւն կ՚ունեանք որ ձեր հովեւին հոգեշունչ խօսքերը կը հասնին շատ հեռուները եւ կ՚ունկնդրուին բոլորէն։

Հուսկ ուրեմն, միամեայ ամփոփ տեղեկագիր մը ներկայացնելով այս պատկառելի ժողովին կ՚ուզենք յիշեցնել թէ անցնող Դեկտեմբեր 31ին այս եկեղեցւոյ մէջ մեր ծառայութեան տասնհինգամեակը լրացաւ։ 15 տարի շարունակ գործեցինք գիշեր ու ցերեկ, վազեցինք ամառ ու ձմեռ որպէս զի տարտղնուած մեր բարեթպաշտ ժողովուրդը ի մի հաւաքենք, իր կրօնական գգացումները արթնցնենք, նոր եկեղեցի շինենք, մեր մատաղ սերունդը հոդ կեղրոնացնենք ու մեր հայրերու թանկագին հաւատքով դաստիարակենք եւ սատարենք ազգապահպանման եւ հայ հաւատքի յաւերժացման։

Յաջողեցնք թէ ձախողեցանք մեր ծրագրին ու առաքելութեան մէջ։ Զենք գիտեր։ Պատասխանը գործին արդիւնքը եւ դուք միայն կրնաք տալ։ Իսկ մեր միակ բաղանքն է այսօր տեսնել հրաշք մը՝ որով Տէրը իրենց յաւիտենական քունէն արթնցնէ բիւրիցս երանելի մեր մեծ ուսուցիչները՝ Բաբեկն Կաթողիկոսն ու Շահէ Սրբազնը եւ մեզ հոգեւորականութեան հրաւիրող եւ մասնաւորապէս այս եկեղեցւոյ վրայ ձեռնադրել տուող լուսաբնակ մեծ հանճար Գարեգին Կաթողիկոսը, որ իրենց կենդանի աշքերով տեսնելէ յետոյ դատեն իրենց Թթատրուպ աշակերտին եւ ձեռնասունին կատարած աննշան գործը։ Այն ատեն երեքը մէկ միութեան վերածելով պիտի ըսենք։ ''Զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք''։ ''Մառայք անպիտանք եմք, զոր պարտէաքն առնել արարաք''։

Իսկ ձեր բոլորին կը հայցենք աստուածային օրհնութիւն եւ քաջառողջ արեւշատութիւն եւ կը յայտնենք մեր սրտագին շնորհակալութիւնները, վասն զի մեր յաջողութիւնները կը պարտինք ձեր բարեացակամ աջակցութեան ու զիհողութեան եւ երկու անգամ վարձատրուեցանք Ազգիս Վեհափառ Հայրապետէն ի պատիւ ձեզի։

*Խորիսութեան
Բայց Եւ Ա. Անդամական*

Բաբեկն Ա. Քհնյ. Մագսութեան
Հոգեւոր Հովհաննես
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ

Գէմպըին, 28 Յունուար 1967